

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

01 փետրվարի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Ֆելիքսի Մկրտչյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Սադյան**
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ, դ.գ.թ. Ալբերտ Եփրեմի Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը» վերնագրով ուսումնական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Սադյան**
3. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
4. **Քննարկում՝** ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերը հիմնադրամներում, մասնավորապես, ԵՊՀ-ում մրցութային կարգով դարձնելու մասին: **Զեկուցող՝ Ա. Սադյան**
5. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Ֆելիքսի Մկրտչյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:

Ելույթ ունեցան՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը և գիտական քարտուղար, ք.գ.թ. Ա. Դադայանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ դոցենտի կոչման հավակնորդ Ա.Ֆ. Մկրտչյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ա.Ֆ. Մկրտչյանը դասախոսություն է կարդում և գործնական աշխատանքներ է վարում «Կենսօրգանական քիմիա» առարկայից: Նա ղեկավարում է կուրսային և դիպլոմային աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ա. Մկրտչյանը հեղինակ է 24 գիտական հոդվածների, որոնցից 9-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում: Վերջին երեք տարում հրատարակել է 5 գիտական հոդված և 2 ուսումնամեթոդական աշխատանք:

Ա.Ֆ. Մկրտչյանի մասին կարծիք հայտնեցին Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը և ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանը: Նրանք նշեցին, որ Ա. Մկրտչյանը աշխատասեր և պրպտող գիտնական է, լավ մանկավարժ, ներկայումս հանդիսանում է Ֆարմացիայի ինստիտուտի գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրենը և արժանի է կրելու դոցենտի կոչում:

Որոշեցին՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ կ.գ.դ. Ս. Բադայան, անդամներ՝ ք.գ.թ. Ս. Ափոյան և Ա. Խաչատրյան: Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 24 անդամներից 18-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 18 անդամներ: Ա.Ֆ. Մկրտչյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 17 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 1 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Ա.Ֆ. Մկրտչյանին՝ դոցենտի (Բ.00.10- «Կենսօրգանական քիմիա») կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ, դ.գ.թ. Ալբերտ Եփրեմի Սահակյանի կողմից ներկայացված «Դեղագործական գործունեության կառավարումը» վերնագրով ուսումնական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանին, ով տեղեկացրեց, որ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի դոցենտ, դ.գ.թ. Ալբերտ Սահակյանի կողմից գիտական խորհուրդ է ներկայացվել «Դեղագործական գործունեության կառավարումը» վերնագրով ուսումնական ձեռնարկը՝ արտաքին գրախոսման համար: Աշխատանքը քննարկվել է ամբիոնում և մեթոդական խորհրդի նիստում (նիստ №5, առ 24. 01. 2019թ., քաղվածքը կցվում է) և ստացել դրական արձագանք: Աշխատանքի վերաբերյալ կարծիք է ներկայացրել նույն ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանը (կարծիքը կցվում է):

Ա. Հովհաննիսյանի բացակայության պատճառով գրախոսի կարծիքը ներկայացրեց գիտքարտուղար Ա. Դադայանը: Նա նշեց, որ գրախոսը գտնում է, որ աշխատանքը բովանդակալից է, ներկայացված է պարզ և մատչելի, ներառում է դեղագործական գործունեության կառավարմանն առնչվող նորագույն դասակարգումներ, առկա են թեստային հարցեր և առաջադրանքներ՝ յուրաքանչյուր գլխի ամփոփման համար: Ձեռնարկն արժեքավոր է նաև այն առումով, որ լրացնում է վերը նշված բնագավառում մայրենի լեզվով նմանօրինակ գրքերի բացակայության պակասը: Ներկայացված աշխատանքն իր հիմնարար և կիրառական նշանակությամբ համապատասխանում է ուսումնական ձեռնարկներին ներկայացվող պահանջներին և երաշխավորում է տպագրության: Գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը ևս շեշտեց աշխատանքի կարևորությունը և առաջարկեց ներկաներին երաշխավորել այն՝ արտաքին գրախոսության ուղարկելու համար:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ս. Վարդապետյանը, Մ. Շեյրանյանը, ովքեր ևս կարևորեցին ուսումնական ձեռնարկի

անհրաժեշտությունը, առաջարկեցին շարունակել դրա տպագրության գործընթացը: Ելույթ ունեցողներն առաջարկեցին աշխատանքն արտաքին արտաքին գրախոսման ուղարկել ԵՊԲՀ Դեղագործության կառավարման ամբիոն:

Որոշեցին՝ (միաձայն) Ա.Ե. Սահակյանի կողմից ներկայացված ուսումնական ձեռնարկը արտաքին գրախոսման ուղարկել ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետ՝ դեղագործության կառավարման ամբիոն:

3. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանին, ով տեղեկացրեց, որ ներկայումս Ֆարմացիայի ինստիտուտից անվանական կրթաթոշակներ են ստանում դեղագիտության 4-րդ կուրսի ուսանողուհիներ Հասմիկ Արամայիսի Սարգսյանը և Մարգարգարիտա Հայկի Բաղդասարյանը: Նրանք շարունակում են իրենց ուսումը՝ գերազանց առաջադիմությամբ, ակտիվորեն մասնակցում են ուսանողական միջոցառումներին և ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Ս. Վարդապետյանն առաջարկեց գիտխորհրդի անդամներին կողմ քվեարկել նշված ուսանողներին անվանական կրթաթոշակների տրամադրումը շարունակելու համար: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր ևս կողմ արտահայտվեցին Մարգարիտա Բաղդասարյանին և Հասմիկ Սարգսյանի անվանական կրթաթոշակների տրամադրումը շարունակելուն:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Շարունակել «Դեղագիտություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Արամայիսի Սարգսյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:
2. Շարունակել «Դեղագիտություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը:
3. Քննարկում՝ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերը հիմնադրամներում, մասնավորապես, ԵՊՀ-ում մրցութային կարգով դարձնելու մասին:

Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Սադյանին, ով ներկաներին ծանոթացրեց ՀՀ Կառավարության № 1515-Ն որոշման (27.12.2018թ.) մասին, առ այն, որ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերը հիմնադրամներում, մասնավորապես, ԵՊՀ-ում հատկացվելու են մրցութային կարգով: Նա գիտխորհրդի անդամներին հորդորեց ներկայացնել կարծիքներ և առաջարկություններ այդ որոշման վերաբերյալ:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Կ.Գ.Դ., պրոֆեսոր Ս. Բադալյանը, ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը և ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, ովքեր հայտնեցին իրենց տեսակետներն այդ որոշման մասին: Մասնավորապես, նշեցին, որ մրցութային ընթացակարգով ֆինանսավորումը կխոչընդոտի մինչ օրս բազային ֆինանսավորմամբ գոյություն ունեցող գիտահետազոտական ենթակառուցվածքների պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստմանը: Ելույթ ունեցողները նշեցին նաև, որ չկան հստակ ձևակերպված չափորոշիչներ՝ մրցութի անցկացման մասին: Նրանք առաջարկեցին նվազագույնը մեկ տարով հետաձգել վերը նշված որոշման իրագործումը՝ գիտության ոլորտում լայնամասշտաբ գործազրկությունից խուսափելու համար:

Ելնելով վերը նշվածից՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց.

1. Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին՝ միջնորդելու ՀՀ կառավարությանը № 1515-Ն որոշման իրագործումը կասեցնելու համար՝ մինչև գիտական հանրության մասնակցությամբ կմշակվեն հստակ չափորոշիչներ:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան